

«ԱՐՄԻՐ ՌԱՆՁՊԱՐԻ» ԳՐԱԴԱՐԱՆ  
Խմբագրութեամբ Բ. ՍՈՒՐԵՆԻ

Գիրք I Գրութեանցի բոլոր երկրների  
միացի

ԳԻՒԼԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՄՄՈՆԻՍՏԱՆԵՐ



Библиотека „Красного Батрака“  
Под редакцией Е. СУРЕНА

Пролетарии всех стран — соединяйтесь!

Книга I.

Хозяйствен. Коммуны.

338.14  
9-68

1921  
Тифлис.

17 FEB 2010

338.14

9-68

300

1607-00

ԵՐԿՈՒ ԽՈՍԷ

Անհատական տնտեսություններ գիւղում ապրում է խորը ճգնաժամ, գոնի, Խորհրդային իրաւակարգ ընդունած, ընդգրկած երկրներում:

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը ազատելով ուսնչաւոր ու ազքատ գիւղացութիւնը պամեշչիկի ու աղււսկանի, կուլակի ու ազրուկի լծից, հողը ամբողջապէս, առանց սպասելու և ձգձգելու, անմիջապէս աւեց էզ հողի վրայ աշխատող գիւղացուն, որը դարձաւ իր արիւն-քրաինքի տէրը: Բայց Ռուսական Յեղափոխութիւնը զբանով չբաւականացաւ: Նա պարզեց սոցիալիստական յեղափոխութեան, կոմմունիստական իրաւակարգի դրոշակը և սկսեց նոր ձևեր փնտռել նաև գիւղական տնտեսութեան ասպարէզում, ձևեր՝ որոնք նրանով են տարբերում հին, կապիտալիստական կարգերի ձևերից, որ որպէս ելակէտ,



20.03.2013

4

ընդունում են կոլլեկտիւ աշխատանքը, կոմմունիստական սկզբունքը:

Այդ նոր ձևերն են.

I. Գիւղատնտեսական կօօպերացիա.

II. Գիւղատնտեսական կոմմունա.

III. Սովետական տնտեսութիւն:

Գիւղատնտեսական կօօպերացիան շատ հին անցեալ ունի. էդ ձևի աշխատանքի հնագոյն ձևն է երկրագործական արեւելք, որ իր սկիզբն է առել դեռ միջին դարերում:

Խորհրդային տնտեսութիւնը համեմատաբար կատարելագործւած, եթէ կուզէք, կատարեալ ձևն է կոմմունիստական տնտեսութեան գիւղում: Նրանք ստեղծւեցին Հոկտեմբերեան Յեղափոխութեան երկրորդ օրը, երբ պարզւեց, որ պամեշչիկական խոշոր կալւածները, կապիտալիստական տնտեսութիւնները չի կարելի բաժան-բաժան անել գիւղացիների մէջ, որ կը լինէր մի յետադիմական քայլ,—և, որպէս կուլտուրական արժէքներ, պէտք է պահպանւէին: Ներկայումս Խորհրդային Ռուսաստանում մօտ մէկ ու կէս միլիոն դեսեատին տարածութիւն չառկացւած է սովետական արն-

տնտեսութեան: Սովետական տնտեսութեան առաւելութիւնները հետեւելու են.

1. Մեծ կենտրոնացում արտադրութեան ասպարէզում:

2. Սերտ կապ արդիւնաբերութեան հետ.

3. Անմիջական կազմակերպչական կապ պրոլետարիատի հետ, որ գիւրացնում է և պարզում կառավարելու սխաւմը. \*):

Կոմմունան—կազմւում է մանր գիւղացիական տնտեսութիւնների միացումից, ձուլումով: Հողը, տաւարը, գիւղատնտեսական գործիքները—ընդհանուր են դառնում, ընդհանրանում և միանում է նաև աշխատանքը: Կոմմունան, այսպիսով, շատ աւելի կատարելագործւած տնտեսութեան ձևն է, քան գիւղատնտեսական արտէլները:

Գիւղատնտեսական կոմմունաները ամենատարածւածն են և սրանց թիւը Խորհրդային Ռուսաստանում հաշւում է հարիւր հազարով:

\*) Տե՛ս Մ. Միլիւտին — Սոցիալիզմ և գիւղական տնտեսութիւն:

Անդրկովկասում կոմմունաները մեծ հետաքրքրութիւն են շարժում և կան տեղաւեր, որ նրանք մեզ մօտ էլ արագ տարածւեն:

«Կարմիր Ռանչպար»-ի գրադարանի առաջին պրակը հենց դրա համար էլ նւերում է կոմմունային: Տալիս ենք առայժմ կոմմունայի միայն կանոնադրութիւնը, մշակած խորհրդային Ռուսաստանում, մօտ ապագայում կը տանք նաև հրահանգները (ինստրուկցիաները), որոնք աւելի ևս կը դիւրացնեն գիւղական ընկերների աշխատանքները և հնարաւորութիւն կը տան մեր գիւղացութեան պարզ պատկերացնելու, թէ ինչ ասել է կոմմունա, ինչպէս պէտք է կազմակերպել, հիմնել կոմմունան մեր գիւղում և՛ որ գլխաւորն է՝ ըմբռնել, թէ ինչ առաւելութիւններ ունի կոմմունայ տնտեսութիւնը տնտեսական տնտեսութեան հանդէպ:

Ե. ՍՈՒՔԵՆ

7 ապրիլի 1921

Թիֆլիս

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԸ

§ 1. Գիւղատնտեսական արտադրող կոմմունաների վերջնականնպատակն է՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան գիւղատնտեսական արտադրութիւնը կերպարանափոխել կոմմունիստական հիմքերի վրայ, այսինքն՝ կոլեկտիւ (միաբանած) աշխատանքի և արտադրութեան միջոցների ու գործիքների, ինչպէս օրինակ շինութիւնների, մեքենաների, անասունների և ուրիշ առարկաների (մի խօսքով՝ «կենդանի ու մեռած ինվէնտար» կոչւածի) կոլլեկտիւ կերպով օգտագործելու, հասարակական կոլլեկտիւ աշխատանքի արդիւնքը, կիանքի ամէն բարիքները արդարութեան հիմքերի վրայ բաժանելու համար:

§ 2. Այդ նպատակին հասնելու համար կոմմունաները պէտք է անհաշտ կռիւ մղեն հին կապիտալիստական

ռէժիմի դէմ, որ հիմնւած է արտադրութեան միջոցների ու գործիքների մասնաւոր սեփականութեան վրայ, մի մարդու շահագործման ու ճնշման վրայ միւս մարդու կողմից, աշխատանքի արդիւնքներից անարդարացի օգտւելու վրայ: Այդ կոխը կոմմունիստները պէտք է մղեն ամեն կերպ և բոլոր միջոցներով, մինչև անգամ գէնքով գիմադրել հողատէրերին, կապիտալիստներին, կուլակներին և հին հասարակութեան ուրիշ տարրերին, որոնք ուզում են վերադարձնել իրենց նախկին քաղաքական և անտեսական տիրապետութիւնը:

§ 3. Հասնելու համար աշխատատեղերի յեղափոխական շարժման վերջնական նպատակին — կոմմունիստական իրաւակարգին, անհրաժեշտ է կերպարանափոխել ամբողջ ժողովրդական անտեսութիւնն աշխատէս, որ նա ծախսելով որքան կարելի է քիչ աշխատանք՝ կատարեալ չափով ապահովւի բոլոր աշխատաւորների կարիքների բաւարարութիւնը:

Այս պատճառով երկրագործական կոմմունիստները՝ որպէս փոքրիկ մաս-

նիկը ընդհանուր ժողովրդական արդիւնաբերութեան, պէտք է ամեն կերպ ձգտեն՝

ա) Միաբանելու երկրագործական արդիւնաբերութիւնը քաղաքային — մշակող արդիւնաբերութեան հետ. ստեղծելու մի, ծրագրւած ժողովրդական անտեսութիւն, կատարելապէս շաղկապելու համար ժողովրդական աշխատանքի բոլոր ճիւղերը եղբայրական արդարութեան հասնելու՝ բոլոր աշխատաւորների մէջ ամեն կենսական բարիքները բաժանելիս:

բ) Զարգացնելու երկրագործութեան մէջ խոշոր կոլլեկտիւ (միաւորւած, ընկերային) անտեսութիւն, միացնելով և ամբողջովին ձուլելով փոքր կոմմունիստները խոշորների մէջ, կազմակերպել կոմմունիստների միութիւններ, նոյնպէս և անդադար ագիտացիա ու պրոպագանդ մղել մոտիկ սեփականատէր գիւղացիների շրջանում, որպէսզի վերացւի միանգամ ընդմիշտ հողատիրութիւնը, այսինքն՝ երբ առանձին հողագործը պանապան դաշտերում ունի ցիրուցան հող. ձգտել, որ հողը մշակւի հասարակական ոյ-

ժերով, նպաստել կազմակերպելու Խորհրդային տնտեսութիւն և հաստատել ներդաշնակութիւն տնտեսութեան և կոմմունիստների աշխատանքների ու ծրագիրներին մէջ:

զ) Բարեկաւել կոմմունիստական աշխատանքի արտադրութիւնը, օգտագործելով և գործադրելով էդ նպատակով գիտութիւնը և տեխնիկան՝ գիւղատնտեսութեան մէջ, այսինքն մտցնել դաշտերի օրինակելի մշակում, բազմապատշաձային գիւղատնտեսութիւն, լայն շախմով գործադրել արհեստական պարարտացման միջոցներ, մտցնել գիւղատնտեսական մեքենաներ և գործիքներ: Էս բանում կոմմունիստ պիտի դեկավարէ էն տնտեսական-կազմակերպչական ծրագրով, որ տեղական պայմաններին համապատասխան մշակած կը լինեն գիտուն մասնագէտները և հաստատած Հողագործութեան ժողովրդական Կոմիսարի կամ տեղական Հողային Բաժնի կողմից:

Կոմմունիստ տնտեսութիւն վարելու անհրաժեշտ պահանջն այն է, որ նրա ամեն անդամի տնտեսութիւնը լինի մի կտոր հողի վրայ և էդ հողը,

եթէ կարելի է, հարեան լինի կոմմունիստային, կամ այլ տեսակ կոլեկտիւ տնտեսութեան (Սովետական, ընկերակցական-արտելական) հողերին:

Գիւղատնտեսական կոմմունիստ բոլոր մարդկանց օրինակ պիտի ծառայի աշխատանքի և էդ աշխատանքի արդիւնքից օգտուելու եղբայրական միութեան: Էդ պատճառով ո՛վ ցանկանում է մըտնել կոմմունիստայի մէջ, նա պիտի հրաժարի կոմմունիստայի օգտին իր անձնական սեփականութիւնից, լինի զափող, արտադրութեան գործիքներ, աւանտուն և առհասարակ ամեն տեսակ կայք, որ անհրաժեշտ է կոմմունիստ տնտեսութիւն վարելու համար:

Կոմմունիստայի ամեն անդամը պիտի կտարի էն աշխատանքը, որին նա աւելի պատրաստ է, խստիւ կերպով հպատակելով էն ցուցմունքներին, որոնք կը տայ կոմմունիստայի ընտրած ղեկավարը:

Կոմմունիստայի անդամը պիտի տայ իր բոլոր ոյժերը, բնդունակութիւնները կոմմունիստայի ծառայութեան: Մոյլերը տեղ չունեն կոմմունիստայի մէջ: Համար

ձայն Ռուսաստանի Սոցիալիստական Թեղերատիւ Սորհրդային Հանրապետութեան օրէնքի՝ աշխատանքի ընդունակ մարդը, որը չի ուղում աշխատել, իրաւունք չունի հաց ուտել:

Կոմմունան իր ամեն անգամից վերցնում է ինչ որ կարող է տալ նրա ոչ ժիրն ու ընդունակութիւնները և վերադարձնում է նրան ամենը՝ ինչ անհրաժեշտ է նրա առօրեայ կարիքների համար:

Կոմմունան, — որ ձգտում է վերացնել ամեն տեսակ շահագործում և մարդու կեղեքումը միւսի ձեռքով, — չի կարող իր անտեսութեան մէջ գործադրել վարձու աշխատանք, շահելու նպատակով: Միևնոյն ժամանակ կոմմունան խիստ հետեւում է, որ կուլակների մասնաւոր անտեսութիւնների մէջ չշահագործւի աղքատ գիւղացի բանւորը՝ վարձու աշխատանքի կամ այլ տեսակ սպեկուլեացիայի ու վաշխառութեան միջոցով:

Ընդունելով կոմմունիզմը արտագրութեան գործում, կոմմունան պարտաւոր է ձգտել, որպէսզի կազմակերպի իր անսխալների մէջ նաև կոմմուն-

նիստական բաժանում էն միեւրբների վերաբերեալ, որոնք կը ստացեն կոմմունական անտեսութիւնից կամ սոցիալիստական բանւորագիւղացական իշխանութիւնից: Էդ նպատակով կոմմունան կազմակերպում է ընդհանուր կացարաններ, ճաշարաններ, հագուստեղէն ու սպիտակեղէն պատրաստելու և մաքրելու ընդհանուր արհեստանոցներ և այլն:

Յօդ. 4. Կոմմունան, հանգիստաւրով բոլոր աշխատաւորների հաւասարութեան իսկական օրինակը, պէտք է իր շրջանում ձգտի ոչնչացնելու սղամարդի և կնոջ մէջ եղած անհաւասարութիւնը:

Գիւղացի կանանց ճնշած դրութեան և կուլտուրայէս ցած գտնելու պատճառներից մէկը հանգիստում է այն, որ նա սղամարդու հետ միասին արտագրողական աշխատանք կատարելուց զատ, կրում է նաև տնային անտեսութեան պարտականութիւններ և երեխաների կրթութեան հոգսը: Էդ տնային պարտականութիւններն ամբողջապէս խլում են նրանից արդիւնաբերող աշխատանքի հան-

զըստի ամբողջ ժամանակը: Տղամար-  
դու և կնոջ մէջ եղած այդ անհաւա-  
ստութիւնը ոչնչացնելու նպատակով,  
կոմմունան պէտք է կազմակերպի  
միութամանակ՝ ընդհանուր սեղանա-  
տներ, կար ու ձեի արհեստանոցներ,  
նաեւ պէտք է կազմակերպի երեխա-  
ների հասարակական գաղութարարու-  
թիւնը— մանկապարտէզներ և մսուր-  
ներ (Ясли) ծծկեր երեխաների հա-  
մար, ենթարկւելով այդ գործում դա-  
ւառական և նահանգական Գործադիր  
Կոմիտէների կրթական և առողջապա-  
հական բաժինների ցուցմունքներին:

Յօդ. 5. Կապիտալիստական-կարւա-  
ծատիրական հին հասարակարգը, գիւ-  
ղական աշխատաւորներին դարեւորով  
պահել էր տգիտութեան և հոգևոր խա-  
ւարի մէջ, փակելով մուտքը դէպի  
մարդկութեան կուլտուրական նւա-  
ճումները, այդ պատճառով էլ կոմմունա-  
ները գիւղի համար պէտք է դառնան  
գիտութեան պայծառ լուսատուներ,  
պէտք է բացեն նրա համար մուտքը  
դէպի կուլտուրայի և գեղարւեստի  
գանձերը: Էս իսկ նպատակով կոմ-  
մունաները, իրականաբար համաձայնու-

թեամբ ժողովրդական Լուստարու-  
թեան Կոմիտարիատի որոշումների և  
որա տեղային բաժանմունքների ցուց-  
մունքների հետ, պէտք է կազմակեր-  
պեն աշխատաւորական դպրոցներ, գը-  
րադարան-ընթերցարաններ, ժողովը-  
րական տներ, ընդհանուր կրթական և  
մասնագիտական դասընթացքներ տա-  
րիքաւորների համար և միատեղ ըն-  
թերցումներ:

Յօդ. 6. Կոմմունան հանդիսանում է  
բոլոր երկրների աշխատաւորների խա-  
կական եղբայրութեան նախադիպը,  
զրա համար էլ աշխատաւորութեան  
ուսումնական ազգութեան չպատկանելը,  
տարբէք կրօն, լեզու կամ սովորու-  
թիւններ ունենալը չեն կարող արգելք  
հանդիսանալ կոմմունային անդամա-  
գրւելուն: Կոմմունայի անդամ չեն կա-  
րող լինել միմիայն նրանք, որոնք  
շահագրգռւած են հին կարգերի  
պահպանման մէջ՝ վաշխառուները,  
սպեկուլեանտները, քահանաները,  
նախկին պոլիցիականները և բո-  
լոր նրանք, որոնք կոխ են մղում  
Խորհրդային իշխանութեան դէմ, թէ-  
կուզ միմիայն խօսքով: Այսինքն՝

այն ամենքը, որոնք չեն ցանկանում  
ապրել նոր ձևերով և ուրիշներին էլ  
խանգարում են նոր կեանք ստեղծելու:

Յօդ. 7. Կոմմունան աշխատուորնե-  
րի եղբայրական աշխատուորական  
ագատ միութիւնն է, հիմնած իր ան-  
դամների ինքնագործունէութեան և  
ինքնավարութեան վրայ: Կոմմունայի  
բոլոր անդամները օգտւում են միա-  
հաւասար ձայնով կանոնադրութեան  
փոփոխութեան և լրացման դէպքերում,  
ոնտեսութեան ծրագրի մշակման և  
դեկավար Սորհրդի ընտրութեան,  
նրա գործելակերպի ու կարգադրու-  
թիւնների ընկերական քննադատու-  
թեան խնդիրներում: Կոմմունայի բո-  
լոր անդամները միանման պարտա-  
կանութիւններ են կրում կանոնա-  
դրութեան և Կոմմունայի շահերը  
պաշտպանելու խնդրում:

Յօդ. 8. Կոմմունան լինելով տըն-  
տեսական և կուլտուր - կրթական  
մի փոքրիկ քճիճ Բանուորա-գիւղացիա-  
կան պետութեան ամբողջութեան մէջ,  
պարտաւոր է ամեն գործում ենթարկ-  
ւել, ինչպէս Կենտրոնական Սորհրդ-  
դային իշխանութեան որոշումներին և

կարգադրութիւններին, նոյնպէս և  
նրա տեղային նահանգական և գաւա-  
ռական մարմիններին, մասնաւորա-  
պէս Հոգային Բաժանմունքներին, ո-  
րոնք կոչւած են տեղերում առաջնոր-  
դելու և վերաշինելու հոգադորձական  
արդիւնաբերութիւնը կոմմունիստա-  
կան սկզբունքներով:

1003  
12395



## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

### I. Կոմմունայի անունը եւ տեղը

Յօդ. 1. . . . . գիւղատնտեսական արտադրական կոմմունան կազմակերպւում է . . . . . վոյստի . . . . . գաւառի . . . . . նահանգի հողարածնում, որ յատկացրել է նրան . . . . . գաւառագործինը (Уземотдел) օգտուելու նպատակով:

### II. Կոմմունայի կազմը

Յօդ. 2. Գիւղատնտեսական-արտադրական . . . . . կոմմունայի անգամ կարող են լինել առանց սեռի, դասանանքի, ազգութեան, հպատակութեան եւ զբաղմունքի խտրութեան, 18 տարեկան հասակից սկսած եւ խորհուրդների մէջ մտնելու իրաւունքից չզրկւած քաղաքացիները, համաձայն Ռ. Ս. Ֆ.

Խ. Հ. (Հիմնական Օրէնքներ) սահմանադրութեան\*):

Մանօրութիւն. 1. Կոմմունայի անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ, հաստատւած գաւառագործինը (Уземотдел-ի) կազմից, յօդ. 2 որոշւած չափը կարելի է իջեցնել մինչև 16 տարեկանը:

Մանօրութիւն. 2. Կոմմունայի կազմի մէջ մտնում են նաեւ կոմմունայի անդամների ընտանիքի 18 տարեկանից պակաս անչափահասները:

Յօդ. 3. Քաղաքացիները, մտնելով կոմմունայի մէջ, նախապէս պէտք է լիկւիդացիայի ենթարկեն իրանց կայքի վերաբերեալ բոլոր պարտականու-

\*) Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմանադրութիւնից քաղւածքներ: «Յօդ. 64. — Ընտրելու եւ ընտրւելու իրաւունքից խորհուրդներում օգտուում են՝ անկախ դասանանքի, ազգութեան, հասակիցութեան եւ այլն, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. հետեւեալ երկու սեռի քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է ընտրութեան օրը»:

ա) Բոլորը, որոնք ապրուստի միջոցներ են ձեռք բերում արդիւնաւէտ եւ հաստատկական աշխատանքով, նոյն-

թիւները և պարտքերը, իրենց պատկանելիք շինութիւնները, կենդանի և մեռեալ ինչքը (инвентарь) և դրամները յանձնելով կոմմունայի սնորէնութեան:

Յօդ. 4. Կոմմունայի անդամների ընդունելն ու հեռացնելը կատարուում են կոմմունայի անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ:

Յօդ. 5. Կոմմունայի իւրաքանչիւր անդամ կարող է ցանկացած ժամանակը դուրս գալ նրանից, ընդհանուր ժողովի նշանակած միջոցին, տոաջուց նախագիւղացնելով դրա մասին կոմմունայի խորհրդին:

պէս և այն անձինք, որոնք զբաղւած են տնային տնտեսութեամբ. առաջինների համար հնարաւորութիւն է աւելի ապահովել արդիւնաբերող աշխատանքը, այսինքն՝ բոլոր տեսակի և կատեգորիայի բանւորները և ծառայողները, որոնք զբաղւած են արդիւնագործութեան, առևտրի, գիւղատնտեսութեան և այլն մէջ, գիւղացիները, կազակ-կրակրագործները, որոնք չեն օգտուում վարձու աշխատանքից օգուտ քաղելու նպատակով:

### III. Կոմմունայի կազմակերպութիւնը եւ սկսեալութիւն վարելը

Յօդ. 6. Կոմմունան պէտք է կազմակերպի իր տնտեսութիւնը միանգամայն համապատասխան, երկրագործական այդ շրջանի համար որոշւած Խորհրդային իշխանութեան ընդհանուր մակարդակի (нормы) և դեկլարութեամբ գիւղատնտեսների և որիշ մասնադէտների, որոնք գտնուում են Խորհրդային իշխանութեան և նրա տեղային մարմիններում ծառայութեան մէջ:

Յօդ. 7. Կենդանի և մեռեալ ինչքը կոմմունայ տնտեսութեան բոլոր արդիւնքները մանրամասն հաշւի են առնուում, ցուցակադրւում են յատուկ

բ) Խորհրդային բանակի և նաւատորմի զինւորները:

բ) Այն քաղաքացիները, որոնք մտնում են ներկայ յօլւածի «ա» և «բ» յիշւած շարքի մէջ, որոնք կորցրել են որևէ կերպ, որոշ չափով աշխատելու ունակութիւնը:

Յօդ. 65. Չեն ընտրւում և չեն կարող ընտրւել, թէև գտնւելիս էլ լինեն փերե թւած շարքի մէջ՝

գրքերի մէջ և պահուում կոմմունայի պահանատներում:

Յօդ. 8. Կոմմունայի արտադրած հաշւի տոնւած մթերքների քանակը, որ անհրաժեշտ է իր անդամների և նրանց ընտանիքի անդամների պէտքերը հոգալու, նմանապէս և կենդանիները պահելու համար, որոշուում է յայտնի չափով, տեղային Խորհրդային պարենաւորման մարմինների կողմից:

Ծանօթութիւն. — Կոմմունային մասնակցողների բոլոր կարիքները, ինչպէս և կոմմունայ տնտեսութեան մթերքները, յօդ. 8-ի ցոյց աւած չափերով, աճնալէս և տոնասարակ բոլոր մթերքները և սպառուման առարկաները,

ա) Անձինք, որոնք վարձու աշխատանքով նպաստակ տնէն շահագործել:

բ) Անձինք, որոնք ապրում են ոչ աշխատասիրական եկամուտով, աճն է՝ կապիտալը շահով տալով, ձեռնարկութեան, մուլքի եկամուտով և այլն.

գ) Մասնաւոր աւետարականները, վաճառական և աւետարական միջնորդները.

դ) Արեղանները, եկեղեցու սպասարները և կրօնական պաշտամունքներին ծառայողները.

ե) Նախկին ուսակական, ժան-

բաւարարուում են համաձայն յատուկ հրահանգի, որը մշակոււմ է կոմմունայի անդամների ընդհանուր ժողովը:

Յօդ. 9. Կոմմունայի արտադրած մթերքների աւելորդը, կոմմունայի անդամների և սրանց ընտանիքների կարիքները հոգալուց յետոյ (յօդ. 8-ի կանոնադրութեան հարան կից ծանօթ.) պէտք է արւեն տեղական պարենաւորման մարմիններին ընդհանուր հիմունքներով:

Յօդ. 10. Պարենաւորման մարմիններին յանձնած մթերքների աւելորդ մասը, կենտրոնական և տեղային Խորհրդային խշխանութեան վճռի հա-

զարմերիցայի և զանազան բաժանմունքների ծառայողները և ապենաները, նոյնպէս և Ռուսաստանի թաղաւորող տան անդամները.

զ) Անձինք, որոնք որոշած կարգով հատատոււած են որպէս հոգեկան հիւանդներ, տկարամիտներ, հաւատարալէս նաև խնամատարութեան տակ դաւաւածները.

է) Անձինք, որոնք շահագիտական և վարկարեկող ոճրագործութեան համար, օրէնքի և դատաստանական վրձիւներով դատապարտոււած են:

մեմատ, վերցւում է, ի հաշիւ պետութիւնից ստացած փոխառութիւնը հանգցնելու և ընդհանուր պիտական և տեղային ծախքերը ծածկելու համար:

Յօդ. 11. Կոմմունայի ողջ եկամուտը պահպանելու, նրա անգումներին և կոմմունայի ծախքերը, ցոյց տրուած յօդ. 10-ի մէջ, ծածկելուց յետոյ, մնացածը բացառապէս գործադրում է կոմմունայի բարեկաման և նրա տնտեսութեան ընդլայնման, նոյնպէս և կուլտուր - կրթական նպատակներին համար:

Յօդ. 12. Բացի իր հիմնական արդիւնաբերութիւնից (հողագործութիւն), կոմմունան կարող է կազմակերպել նոյնպէս կողմնակի արդիւնաբերութիւններ — այգեգործութիւն, անտառարուծութիւն, մեղաբուծութիւն, ձկնորսութիւն և ձկնաբուծութիւն, եթէ այդ արդիւնաբերութիւնները չեն ֆրասում կոմմունայի հիմնական արդիւնաբերութեանը և նրան կից տնտեսութեանը և չեն հակասում սոյն շրջանի ընդհանուր գիւղատնտեսական նախագծին:

Յօդ. 13. Կոմմունան համապատասխան կարիքի և հնարաւորութեան, կազմակերպում է զանազան արհեստանոցներ, արտադրելու համար մթերեքներ, ինչպէս իր սեփական տնտեսութեան կարիքների համար, նոյնպէս և փոխանակութեան: Բացի էլ, կոմմունան կարող է իր վրայ վերցնել անտառային նիւթեր պատրաստելու, տեղափոխման (փոխադրումն ու տեղադրումն) աշխատանքները և այլն:

Յօդ. 14. Ոչ ոք կոմմունայի անգամներից չի կարող, կոմմունայի սահմաններում կատարած իր աշխատանքների համար, առանձին վարձատրութիւն ստանալ ոչ գրամով և ոչ միէրքով, բացի նրա կարիքների բաւարարումից՝ հաւաստաշատի միւս անգամների:

Յօդ. 15. Իւրաքանչիւր վարձատրութիւն, որը կը ստանայ իր աշխատանքների համար կոմմունայի ֆոնդամը, գործադրւած կոմմունալ արտեսութեան սահմաններից դուրս, պէտք է յանձնւի կոմմունայի ընդհանուր տնօրինութեան:

Յօդ. 16. Կոմմունան չի կարող

օգտուել շահադիտական նպատակներով (շահագործումն)։ Եթէ մի դորձ գլուխ բերելու համար պահանջուած է առանձնապատուկ գիտութիւն և պատրաստութիւն ունեցող անձինք, որպիսիք չեն գտնուում կոմմունայի անդամների մէջ, նա կարող է էդ աշխատանքների համար, դաշոգկումի (Уземотдел) գիտութեամբ, հրաւիրել ժամանակաւոր մասնակցողներին։

Ծանօթութիւն.— Աշխատանքների համար կարճ ժամանակով կարելի է հրաւիրել մասնագէտներ և առանց դաշոգկումի գիտութեան։

Յօդ. 17. Վարի, ցանքսի, խոհարարի և հնձի, ինչպէս նաեւ այլ ղէպերում, երբ կոմմունան պարզապէս հնարաւորութիւն չունի աշխատանքը գլուխ բերելու, որպէս ժամանակաւոր մասնակիցների կարող է հրաւիրել և ոչ մասնագէտներ։

Յօդ. 18. Աշխատանքի պայմանները (օրւայ աշխատանքի տեղութեան և վարձատրութեան) ժամանակաւոր մասնակցողների՝ ինչպէս մասնագէտների, որոշուում են Նահանգական Հոգադործական Բաժինների կողմից՝

համաձայնութեամբ համապատասխան Նահանգական Աշխատանքի Բաժնի հետ։

Յօդ. 19. Աշխատանքի օրւայ տեղութեան և հանգստի ժամերը, կոմմունայի բոլոր անդամների համար, որոշուում է ընդհանուր ժողովի կողմից համաձայն տարւայ ժամանակի և աշխատանքի ընդթիւ և համապատասխան Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. «Աշխատանքի Օրէնսդրքի»։

Յօդ. 20. Կոմմունայի ամեն մի անդամին պէտք է հնարաւորութեան չափ տրւի այնպիսի աշխատանք, որը համապատասխանի նրա առողջութեան, ունակութեան, ընդունակութեան և համաձայն կոմմունայի հիմնական տընտեսութեան պահանջների։

Յօդ. 21. Կոմմունայում կադմակերպուում է հնարաւորութեան չափ հասարակական անուղ ընդհանուր կոմմունալ սեղանատանը։

Յօդ. 22. Կոմմունան տներ շինելիս, իւրաքանչիւր ընտանիքի համար յատկացնում է, հնարաւորութեան չափ, առանձին բնակարան իր անհրաժեշտ կարգ ու սարքով։

Բազմից, լուսացատեղին և այլ շէնքերը պէտք է լինեն ընդհանուր բուրի համար և ծառայեն ընդհանուր աշխատակցութեամբ կոմմունայի և որհրդի որոշած կարգով:

#### IV. Կոմմունայի անդամների իրաւունքները և պարտականութիւնները

Յօդ. 23. Կոմմունայի իւրաքանչիւր անդամը օժտւած է միւս բոլոր անդամներին հաւասար իրաւունքներով գործերը վարելու, կոմմունայ տրուած սեռութեան միջոցների բաշխման և ընդհանրապէս էն բոլոր առարկաների վերաբերմամբ, ինչոր ունի կոմմունան իր տրամադրութեան տակ:

Յօդ. 24. Կոմմունայի իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի լաւարարութիւն ստանալու կուլտուրական մարդուն յատուկ բնական բոլոր պահանջների համար, որքան այդ հնարաւոր է իւրաքանչիւր առանձին զէպրում, նախած կոմմունայի արդիւնաւետութեան և էն միջոցներին, որոնք չեն հակասում անտեսութեան շահերին: Նոյն-

պիսի իրաւունքներով էլ օգտւում են կոմմունայի բոլոր աշխատանքի անընդունակ անդամները (հիւանդները, սախաթները, ծերունիները) և կոմմունաւորների փոքրահասակ երեխաները, որոնք բուժւում են, պահւում և կրթւում կոմմունայի միջոցաւ, զործնական, բոլորի համար հաւասար հնարաւորութեան սահմաններում:

Յօդ. 25. Կոմմունայի ժամանակաւոր աշխատակիցները մասնակցում են նրա անդամների ընդհանուր ժողովին՝ խորհրդակցական ձայնի իրաւունքով, և ոչ մի զէպրում չեն կարող գտնուել, կոմմունայի միւս անդամներին հետ համեմատած, վատթար պայմաններում:

Յօդ. 26. Կոմմունայի իւրաքանչիւր անդամ իր անհատական կեանքի գործունէութեան մէջ օգտւում է իրականաւոր անդամութիւնով, որքան վերջինս չէ խախտում ուրիշ անդամների ազատութիւնը և շահերը կամ կոմմունայի անտեսութեան շահերը:

Յօդ. 27. Կոմմունայի անդամի կամաւոր կամ ստիպողական նրա կազմից հեռանալու զէպրում, նա իրա-

ուենք ունի իր հետ վերցնելու իր կարիքները հողացող տնային առարկաները՝ սպիտակեղէնը, հաղուստեղէնը, ոտնամանները, ինչպէս նրան և նրա ընտանիքի փոքրահասակ անդամներին կոմմունայի տւածները, նոյնպէս և մինչև կոմմունայի մէջ մտնելը օգտուելու համար թողած անհատապէս իրեն պատկանող ունեցւածքը:

Յօդ. 28. Դուրս եկող անդամին նւազատ տալու հարցն իւրաքանչիւր առանձին դէպքում որոշուում է ընդհանուր ժողովի կողմից, որպիսի դէպքերում առաջնորդուում է նայած հանգամանքներին և կոմմունայի մէջ անցկացրած ժամանակով, կոմմունայի համար արած ծառայութիւնով և ազատ նիւթական միջոցներ ունենալու դիպւածքներով:

Մանօք. Անդամների մի կոմմունայից մի ուրիշն անցնելու դէպքում, ոչ մի նպատակ չի կարող արել:

Յօդ. 29. Կոմմունայի անդամները, Կարմիր Բանակի գերակոչի կամ Խորհրդային կարճատեւ պաշտօնավարութեան հրաւիրելու միջոցին, կոմմունայի ցանկից չեն հանուում, սակայն

կոմմունան նրանց պահելու համար չի վճարում:

Յօդ. 30. Կոմմունայի իւրաքանչիւր անդամը, նոյնպէս և կոմմունարների ընտանիքի անդամները պարտաւոր են բարեխղճօրէն աշխատելու, համապատասխան իրանց ուժերի և ընդունակութիւնների՝ ոչ մի աշխատանքից չըհրաժարւելով, տնայայման ենթարկւելով կոմմունայի կանոնադրութեան և նրա ներքին կարգադրութիւններին ու ընդհանուր ժողովի որոշումներին, ամեն կերպ աջակցելով կոմմունայի տնտեսութեան զարգացման և անդամների եղբայրական միութեան:

Յօդ. 31. Կոմմունայի բոլոր անդամները պարտաւոր են ամենազործունեայ մասնակցութիւն ունենալ կոմմունայի բոլոր աշխատանքների ընթացքում. պէտք է յաճախեն իրանց անդամների ընդհանուր ժողովներին և հետեւն, որ Կոմմունայի խորհուրդը չխախտի կանոնադրութիւնը և Կոմմունայի շահերը:

Յ. 32. Համաձայն կանոնադրութ. Կոմմունայի համար որոշած կարգադրութիւնների, յամառ զանցառուները, Կոմ-

մունայի Խորհուրդի կարգադրութիւն-  
ըներ չկատարողները զրանով ֆետա հա-  
ցնելով կոմմունայի անսահմանութեանը,  
ընդհանուր ժողովի որոշմամբ, ձայների  
երկու - երրորդով կարող են զուրս  
հանուկ կոմմունայի անդամների շար-  
քից:

### V. Կոմմունայի գործերի վարումը

Յօդ. 33. Կոմմունան կառավարում է  
իր անդամների ընդհանուր ժողովը, ո-  
րի Գործադիր Մարմինը հանդիսանում  
է Կոմմունայի Խորհուրդը, ընտրւած  
ընդհանուր ժողովի կողմից իր ան-  
դամների միջից, թւով ոչ պակաս  
3-ից և ոչ աւել 5-ից:

### Ընդհանուր Ժողով

Յօդ. 34. Ընդհանուր ժողովը կազմ-  
ւում է Կոմմունային բոլոր մասնակցող  
անդամներից ներկայ կանոնադրու-  
թեան յօդ. 2-րդի որոշած հասակի հա-  
մեմտ. սակայն իւրաքանչիւր կոմ-  
մունայի անդամն ունի միմիայն մի  
ձայն: Չայնի իրաւունքը ուրիշին աւա-  
լը չի թոյլատրւում:

Յօդ. 35. Ընդհանուր ժողովը գու-  
մարւում է կարիք եղած դէպքում և  
աշխատանքից ազատ օրերին և ժա-  
մերին Կոմմունայի Խորհրդի նախա-  
ձեռնութեամբ կամ կոմմունային մաս-  
նակցող բոլոր անդամների մէկ հինգ-  
երորդի պահանջով:

Յօդ. 36. Ընդհանուր ժողովը կաշա-  
ցած է համարւում, եթէ բոլոր մաս-  
նակցող անդամների կէսից ոչ - պակա-  
սը ներկայ է: Առանձին կարևոր հար-  
ցերի, այն է՝ Կոմմունայի Խորհրդի  
ընտրութեան, անդամներ ընդունելու  
և հեռացնելու, կանոնադրութեան փո-  
փոխման կամ լրացման և կոմմունա-  
յի լիկւիդացիայի ենթարկելու (փակե-  
լու) որոշման համար պահանջւում է  
կոմմունայի անդամների  $\frac{2}{3}$ -ից ոչ-պա-  
կաս թիւը:

Յօդ. 37. Ընդհանուր ժողովի և Կոմ-  
մունայի Խորհրդի գործեակերպի սահ-  
մանները որոշւում է ընդհանուր ժո-  
ղովի կողմից մշակւած առանձին հրա-  
հանգներով, համապատասխան կոմմու-  
նայի աշխատանքների բնոյթին, նրա  
անդամների կարիքները հոգալու խըն-  
դիրներին ու կոմմունայի չափերին:

Յօդ. 38. Կոմմունայի անտեսութեան կազմակերպչական ծրագիրը, կոմմունալ կեանքի ներքին կարգաւորումը, հրահանգների հաստատումը և կոմմունայի անդամների կենսական պահանջների բաւարարման ձևի ու կարգի մասին, աշխատանքի բաժանման, ինչքը (явентарь) ձեռք բերելու և շինութիւնների վերաբերեալ հարցերը հաստատուում են Ընդհանուր ժողովի կողմից:

Յօդ. 39. Կոմմունայի Սորհուրդի կամ նրա առանձին անդամների պորձեղակերպի ստուգման համար Ընդհանուր ժողովը կարող է ընտրել Վերաստուգիչ Յանձնաժողով: Վերաստուգիչ Յանձնաժողովը իր աշխատանքների համար պէտք է դեկուցի Ընդհանուր ժողովին:

Յօդ. 40. Բոլոր Ընդհանուր ժողովներում կազմուում են արձանագրութիւններ, որոնք մուծւած են առանձին գրքերի մէջ, ստորագրւած ժողովի նախագահի և կոմմունայի ներկայ գտնւող մի քանի անդամների կողմից:

## Կոմմունայի Սորհուրդը

Յօդ. 41. Կոմմունան, իր գործառնութեան մէջ առաջնորդւում է կոմմունայի կանոնադրութեամբ, հրահանգներով և Ընդհանուր ժողովի որոշումներով, որոնք Կոմմունայի Սորհուրդը պարտաւոր է իրագործել:

Յօդ. 42. Կոմմունայի Սորհուրդը իր անունից յարաբերութեան մէջ է մտնում Սորհրդային իշխանութեան մարմինների, ուրիշ կոմմունաների, հասարակական և մասնաւոր կազմակերպութիւնների հետ:

Ծանօթութիւն. Բոլոր գործնական թղթերը ստորագրւում են Կոմմունայի Սորհրդի նախագահի և նրա մի անդամի կողմից և վաւերացւում կոմմունայի կնիքով:

Յօդ. 43. Կոմմունայի Սորհուրդը հաշւի է առնում բոլոր միջոցները, որոնք գտնւում են Կոմմունայի օգտագործման և կոմմունալ աշխատանքի և նրա արդիւնքների հսկողութեան տակ. պահում է անդամների ընտանիքի ցուցակը, կազմում է նախահաշիւը կոմմունալ անտեսութեան, բաշխում է անդամների մէջ ընթացիկ աշխատանք-

քը, կազմակերպում է նրանց ամենօրեայ կարիքները բաւարարելու հարցը և հետևում է կոմմունայի ինչքը կարգի բերելու վրայ:

Յօդ. 44.—Կոմմունայի Սորհրդի անդամներից մէկը հաստատում է Գաւառական Հոգադորձական Բաժնի կողմից, որպէս Կոմմունայի տնտեսութեան պատասխանատու անդամ:

Յօդ. 45.—Կոմմունայի անդամի հիւանդութեան, մահանալու և բացակայութեան դէպքում, ընտրւում են նրանց թեկնածուներ, որոնք անցնում են իրանց պարտականութիւններին, ձայների մեծամասնութեան հերթական կարգով:

Յօդ. 46.—Կոմմունան ունի իր կնիքը, որի շրջանի վրայ մակագրւած է «Գիւղատնտեսական Արտադրական Կոմմունա», նշանակւած Կոմմունայի անունը մէջտեղում:

## VI Կոմմունայի գործունէութեան վերահսկումը

Յօդ. 47. Կոմմունան, որպէս տնտեսական արդիւնաբերական միակտր հասարակական հոգադորձական

արդիւնադորձութեան, կողլեկալու երկրադորձութեան ուրիշ ձևերի հետ միասին գտնւում է ժողովրդական Հոգադորձական Կոմիսարիատի վերահսկման տակ, որ ի կատար է ածւում անմիջապէս տեղական Հոգադորձական Բաժնի կողմից յանձին մասնագէտների և առանձին հրահանգիչների միջոցաւ:

Յօդ. 48. Իր գործունէութեան հաշւետւութիւնը և Սորհրդային Իշխանութիւնից ստացած փոխառութեան ու նպաստի ծախսածի մասին Կոմմունան պարտաւոր է հաշւետւութիւն ներկայացնել . . . . Գաւառական Հոգադորձական Բաժնին:

## VII Կոմմունայի լիկլիդացիայի կարգը:

Յօդ. 49. Կոմմունան կարող է Ընդհանուր ժողովի որոշմամբ կամովին ղադարեցնել իր գոյութիւնը և լիկլիդացիայի ենթարկել գործերը, կամ կարող է Սորհրդային Իշխանութեան մարմինների կողմից արձակւել, Բ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմանադրութեան հիմնական օրէնքներին համապատասխանող գործունէութեան և

ժողովրդական Կոմիտարիատի և տեղական Նահանգական և Գաւառական Հոգային Բաժինների կարգադրութիւններին չհնազանդուելու գէպըրում:

Յօդ. 50. Կոմիտեան լիկւիդացիայի ենթարկելիս բոլոր առարկաները, որոնք Ընդհանուր ժողովի կողմից յանձնուած են եղել իւրաքանչիւր անդամին օգուելու համար, այն է՝ հագուստը, սպիտակեղէնը, մանր աւօրիայ առարկաները և այլն, թողնուած են նրանց մօտ: Մնացած գոյքերը, այն է՝ հողը, շէնքերը, անասունը, գործիքները, սերմացուի պաշարը, խանութները և անայլն ողջ կարգ ու սարքը և հագուստի պաշարը լիկւիդացիայի գէպըրում մննուած են..... Գաւառական Հոգային Բաժնի անօրէնութեան առկ:

Յօդ. 51. Կոմիտեայի լիկւիդացիայի համար կազմուած է Լիկւիդացիոն Յանձնաժողով, Գաւառական Հոգային Բաժնի կառավարչին ախապահութեամբ կոմիտեայի շահագրգռուած ներկայացուցիչներէց, տեղային կոմիտեալ միութեան ներկայացուցիչ և տեղա-

յին Լոլլեկաիւ անտեսութիւնների ենթարժանմունքի կառավարչից:

## Կոմիտեայի նիւնադիրների ստորագրութիւններ

19 . . . . . թիւ . . . . . « » -ին,  
մենք, ներքոյ ստորագրողներս ներկայութեամբ գաւառական կոմիտեաների, Նրահանգչի . . . . .  
. . . . . և վերոտի Հոգային Բաժանմունքի ներկայացուցչի . . . . .  
. . . . . լսելով և հաւանութիւն տալով ներկայ կանոնադրութեանը, կատարելապէս գիտակցելով նրա յօդաւածների իսկական իմաստը, յօժարութեամբ ստորագրում ենք՝ որպէս վկայութիւն յիշուած կանոնները անխախտ կատարելու մեր ցանկութեան:

(Կոմիտեայի մէջ մատուց անձանց ստորագրութիւնը):

## Հիմնադիրների ստորագրութիւններ և վաւերացումը

Ներկայ կանոնադրութիւնը ստորագրելու միջոցին՝ ներկայ էինք և նրանց

904

30. 468

ստորագրուեթիւնների ինքնագիրը լինելը  
վաւերացնում ենք.

Ներկայացուցիչ . . . . .

Վարդանի Հարությունի

(ամսական թիվը)

Գաւառական Կոմիտենայի Հրահան-  
գիչ: (Սարգսյան Սիմոն):

ԿՐԻՔԻ

1867



## ՀՀ Ազգային գրադարան



NL0208668